Կարգապահական գործ թիվ ԿԳ-15170

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի փետրվարի 17-ի թիվ 21-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/18-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ դիմող Տատյանա Բելյավցևայի և փաստաբան Վահան Ավագյանի (արտոնագիր թիվ 998)

քննության առնելով փաստաբան Վահան Ավագյանին (արտոնագիր թիվ 998) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Քաղաքացի Տատյանա Բելյավցևան (այսուհետ նաև՝ Դիմող) իր 17.09.2015թ. և 22.09.2015թ. դիմումներով հայտնել է, որ 12.11.2012թ. դիմում է ներկայացրել ոստիկանություն այն մասին, որ ինքը, իր ամուսինը և իրենց երեխաները ծանր նյութական կորուստներ են կրում Անահիտ և Վահան Սիմոնյաններից, Էմին Ավանեսյանից: Իր կողմից 14.11.2012թ. լիազորագիր է տրվել փաստաբան Վահան Ավագյանին (այսուհետ նաև՝ Պատասխանող) իր շահերը ներկայացնելու նպատակով: Ըստ կից ներկայացված փաստաթղթերի, մասնավորապես 2012թ. նոյեմբերին կազմված բացատրություն ստանալու մասին արձանագրության, փաստաբանը ներկա է եղել վերոնշյալ դիմումի կապակցությամբ Դիմողից և նրա ամուսնուց՝ Շահեն Գևորգյանից բացատրություն վերցնելու գործողություններին: Դիմողը հայտնել է, որ թիվ ԵԱՆԴ/1957/02/13, թիվ ԵԱՆԴ/1277/02/12, թիվ ԵԱՆԴ/1968/02/13, հնարավոր է նաև թիվ ՎԴ/5825/05 գործերով ներկայացրել է իր հակառակորդ կողմ Անահիտ Սիմոնյանի շահերը: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 գործի քննության ընթացքում որպես Անահիտ Սիմոնյանի փաստաբան ներկայացել է Պատասխանողը, ինչին ինքն առարկել է, իսկ ապացույց ներկայացնելուց հետո դատավորը համաձայնել է, որ Վահան Ավագյանն

իրավունք չունի գործին մասնակցել: Դիմումին կից ներկայացրել է իր կողմից 14.11.2012թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Անահիտ Սիմոնյանի կողմից 26.06.2015թ. Պատասխանողին տրված լիազորագրի, իր կողմից 12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն նրկայացված դիմումի, Սիմոնյանների կողմից տրված պարտավորագրի, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի ավագ հետաքննիչ Ե.Եղյանի 2012թ. նոյեմբերին կազմված եզրակացության, բացատրություն ստանալու մասին 2012թ. նոյեմբերին կազմված արձանագրությունների, Պատասխանողի արտոնագրի և վկայականի պատճենները, «ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքից տպված թիվ ՎԴ/5825/05/11 գործով վճիռը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 16.10.2015թ. թիվ 327-Ա/ԿԳ-15170 որոշմամբ փաստաբան Վահան Ավագյանի (արտոնագիր թիվ 998) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտման հատկանիշներով:

20.10.2015թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը 10.12.2015թ. ներկայացրել է թիվ ԵԱՆԴ/1277/02/12 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանի ներկայացուցիչ Վահան Ավագյանի կողմից 07.10.2013թ. ներկայացված վճռաբեկ բողոքի պատճենը, որտեղ որպես գործին մասնակից չդարձված երրորդ անձ նշված է Դիմողը, Դիմողի կողմից 14.11.2012թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Շահեն Գևորգյանի կողմից 05.10.2012թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Անահիտ Սիմոնյանի կողմից 26.06.2015թ. Պատասխանողին տրված լիազորագրի պատճենները:

Դիմողը 13.01.2016թ. ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի կողմից 03.04.2014թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Վահան Ավագյանի արտոնագրի, իր կողմից թիվ ԵԱՆԴ/1968/02/13 քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու դիմումի պատճենները: Ըստ Դիմողի կողմից ներկայացված դիմումի նշված փաստաթղթերի պատճենները ձեռք են բերվել թիվ ԵԱՆԴ/1968/02/13 քաղաքացիական գործից:

Խորհրդի նիստում պնդեց իր դիմումներում նշված փաստերը, և պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին հայտնեց, որ Անահիտ Սիմոնյանի, իր և իր ամուսնու շահերի միջև բախում առկա է: Պատասխանողն իրեն ծառայություններ է մատուցել իր կողմից ՀՀ ոստիկանություն նրկայացված դիմումի կապակցությամբ՝ բացատրություններ տալու ժամանակ: 2013թ-ից ինքը տեղեկացել է, որ Պատասխանողն իրավական օգնություն է ցույց տալիս Անահիտ Սիմոնյանին և այլևս չի օգտվել նրա ծառայություններից: Դիմել է Պալատ, քանի որ թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Պատասխանողը ներկայացնում էր իր հակառակորդ կողմի շահերը: Դիմողը հայտնեց նաև, որ թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով պատասխանող է նշված «Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ, որի միակ մասնակիցը Անահիտ Սիմոնյանն է, և Պատասխանողը նշված գործով ներկայացնում էր և իրավական օգնություն էր ցույց

տալիս Անահիտ Սիմոնյանին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը 01.10.2015թ. (մուտքագրված՝ 06.10.2015թ.) ներկայացրել է բացատրություն, որտեղ նշել է, որ 05.10.2012թ. Դիմողի ամուսնու՝ Շահեն Գևորգյանի հետ կնքել է պայմանագիր նրան վճարովի փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին և նույն օրը նրա կողմից Պատասխանողին տրվել է լիազորագիր, իսկ 14.11.2012թ. Դիմողի կողմից է Պատասխանողին տրվել լիազորագիր: Նույն օրը Դիմողից և նրա ամուսնուց բացատրություններ են վերցվել Դիմողի կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ, որի ժամանակ ինքը ներկայացրել է նրանց շահերը: 18.01.2013թ. իր կողմից միակողմանի պայմանագիրը լուծվել է՝ Գևորգյանի կողմից պայմանագրով նախատեսված գումարը չվճարելու պատճառով: Դրանից հետո Դիմողի և նրա ամուսնու հետ պայմանագրային հարաբերություններ չի ունեցել: Պատասխանողը հայտնել է նաև, որ թիվ ԵԱՆԴ/1957/02/13 և թիվ ԵԱՆԴ/1277/02/12 գործերով ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի շահերը, այդ գործերով Դիմողը դատավարական կողմ չի եղել, Դիմողի և Անահիտ Սիմոնյանի միջև տվյալ գործով իրավական վեճ և շահերի բախում չի եղել, իսկ թիվ ՎԴ 5825/05/11 վարչական և թիվ ԵԱՆԴ/0438/02/12, թիվ ԵԱՆԴ/1968/02/13 քաղաքացիական գործերով Անահիտ Սիմոնյանի շահերը չի ներկայացրել և նշված գործերի քննությանը չի մասնակցել: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով 08.09.2015թ. որպես Անահիտ Սիմոնյանի ներկայացուցիչ ներկայացել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դատական նիստի սկզբում Դիմողը հայտարարել է, որ փաստաբան Վահան Ավագյանը նախկինում իրեն իրավաբանական ծառայություն է մատուցել, որի կապակցությամբ փաստաբան Վահան Ավագյանը դատարանին տեղեկացրել է, որ չի հիշում նշված հանգամանքը, որից հետո Դիմողի ներկայացուցիչ փաստաբան Ն. Ռշտունու միջնորդությամբ դատական նիստը հետաձգվել է՝ նշված հանքամանքը ճշտելու համար: Երբ ճշտվել է, որ Պատասխանողը նախկինում Դիմողին ծառայություններ է մատուցել, Պատասխանողն այլևս չի մասնակցել տվյալ գործով որպես Անահիտ Սիմոնյանի շահերի ներկայացուցիչ՝ հաշվի առնելով, որ Դիմողը և Անահիտ Սիմոնյանն այդ գործով դատավարական հակառակորդներ են: Պատասխանողը բացատրությանը կից ներկայացրել է թիվ ԵԱՆԴ 1957/02/13, թիվ ԵԱՆԴ/1277/02/12, թիվ ԵԱՆԴ/0438/02/12, թիվ ԵԱՆԴ/1968/02/13 քաղաքացիական և թիվ ՎԴ/5825/05/11 վարչական գործերով վճիռների, Շահեն Գևորգյանի հետ 05.10.2012թ. կնքված պայմանագրի, Դիմողի կողմից 14.11.2012թ. տրված լիազորագրի, Շահեն Գևորգյանի կողմից 05.10.2012թ. տրված լիազորագրի պատճենները:

Պատասխանողը 26.10.2015թ. ներկայացրել է բացատրություն, նշելով, որ թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանի հանձնարարությունն ընդունելիս տեղյակ չի եղել հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքի մասին: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով 08.09.2015թ. որպես Անահիտ Սիմոնյանի ներկայացուցիչ ներկայացել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դատական նիստի սկզբում Դիմողը հայտարարել է, որ փաստաբան Վահան Ավագյանը նախկինում իրեն իրավաբանական ծառայություն է մատուցել, որի կապակցությամբ փաստաբան Վահան Ավագյանը դատարանին տեղեկացրել է, որ չի հիշում նշված հանգամանքը, որից հետո Դիմողի ներկայացուցիչ փաստաբան Ն. Ռշտունու միջնորդությամբ դատական նիստը հետաձգվել է՝ նշված հանքամանքը ճշտելու համար: Երբ ճշտվել է, որ Պատասխանողը

նախկինում Դիմողին ծառայություններ է մատուցել, Պատասխանողը այլևս չի մասնակցել տվյալ գործով որպես Անահիտ Սիմոնյանի շահերի ներկայացուցիչ՝ հաշվի առնելով, որ Դիմողը և Անահիտ Սիմոնյանը այդ գործով դատավարական հակառակորդներ են: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանին իրավաբանական օգնություն չի տրամադրել: Պատասխանողը հայտնել է նաև, որ Դիմողի դիմումում նշված մյուս հանգամանքների մասին նշել է իր 01.10.2015թ. ներկայացրած բացատրությունում:

Պատասխանողը Խորհրդի նիստում տվեց նույնաբովանդակ բացատրություն, և պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին հայտնեց, որ Անահիտ Սիմոնյանին, Դիմողին և Դիմողի ամուսնուն իրավական օգնություն է ցույց տվել նույն խնդրի շուրջ, և իր կարծիքով նրանց շահերի միջև հակասություն չկա: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով պետք է ներկայացներ Անահիտ Սիմոնյանի շահերը: Հայտնեց նաև, որ չի հիշում երբ է ծանոթացել Անահիտ Սիմոնյանի հետ, բայց հիշում է, որ սկզբում Դիմողին է փաստաբանական ծառայություններ մատուցել, հետո Անահիտ Սիմոնյանին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

21.12.2015թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը նշել է, որ սույն կարգապահական գործով ապացուցման ենթակա փաստեր են համարվում ստորև նշված փաստերը.

- արդյոք փաստաբան Վահան Ավագյանը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում Անահիտ Սիմոնյանի հանձնարարությունն ընդունելիս տեղյակ եղել է հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքների առկայության մասին,
- արդյոք փաստաբան Վահան Ավագյանը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում Անահիտ Սիմոնյանին տրամադրել է իրավաբանական օգնություն:

Ըստ նախապատրաստողի Դիմողի նշված հանգամանքների և ներկայացրած փաստաթղթերի, Պատասխանողի ներկայացրած բացատրությունների, տրամադրված փաստաթղթերի, ինչպես նաև datalex.am կայքում տեղադրված նշված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվության ամփոփ ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է, որ փաստաբան Վահան Ավագյանը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում Անահիտ Սիմոնյանի հանձնարարությունն ընդունելիս տեղյակ եղել է հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքների առկայության մասին: Այս հանգամանքը հաստատված լինելու պարագայում, ինչպես նաև դեռևս 26.06.2015թ. Անահիտ Սիմոնյանի կողմից փաստաբան Վահան Ավագյանին տրված լիազորագրի առկայությունը, և թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով 08.09.2015թ. դատական նիստին ներկայանալն արդեն իսկ հաստատում են, որ փաստաբան Վահան Ավագյանը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում Անահիտ Սիմոնյանին տրամադրել է իրավաբանական օգնություն:

23.12.2015թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Պատասխանողը 30.12.2015թ. (մուտքագրված՝ 11.01.2016թ.) ներկայացրել է առարկություն թիվ 15170 կարգապահական գործով եզրակացության դեմ, որով մասնավորապես հայտնել է, որ Դիմողին իրավաբանական օգնություն ցույց է տվել 14.11.2012թ., իսկ Անահիտ Սիմոնյանին 26.06.2015թ., այսինքն երկու տարի չորս ամիս հետո, և այդպիսի երկար ժամանակի ընթացքում հնարավոր չէր հիշել, որ նախկինում Դիմողին իրավական օգնություն է ցույց տվել: Դա հաստատվել է նաև 08.09.2015թ. դատական նիստի ժամանակ, երբ ինքը ներկայացել է դատական նիստին և դատարանին տրամադրել է Անահիտ Սիմոնյանի կողմից տրված լիազորագիրը և արտոնագրի պատճենը, որպեսզի դատարանն իրեն ներգրավվի Անահիտ Սիմոնյանի ներկայացուցիչ, և այդ պահին էլ Դիմողը առարկել է դրա դեմ՝ հայտարարելով, որ փաստաբան Վահան Ավագյանը նախկինում իրեն իրավաբանական ծառայություն է մատուցել, որի կապակցությամբ փաստաբան Վահան Ավագյանը դատարանին տեղեկացրել է, որ չի հիշում նշված հանգամանքը, որից հետո Դիմողի միջնորդությամբ դատական նիստը հետաձգվել է՝ նշված հանքամանքը ճշտելու համար: Երբ ճշտվել է, որ Պատասխանողը նախկինում Դիմողին իրավաբանական օգնություն է ցույց տվել, Պատասխանողը հրաժարվել է Անահիտ Սիմոնյանին իրավաբանական օգնություն ցույց տալուց՝ հաշվի առնելով, որ Դիմողը և Անահիտ Սիմոնյանը այդ գործով դատավարական հակառակորդներ են: Թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանին իրավաբանական օգություն չի տրամադրել: Պատասխանողը նաև նշել է, որ 26.06.2015թ. Անահիտ Սիմոնյանի կողմից փաստաբան Վահան Ավագյանին տրված լիազորագիր տրամադրելը դեռևս չի կարող որակվել որպես իր կողմից իրավաբանական օգություն ցույց տալու հանգամանք, քանի որ ինքը հնարավորություն կունենար որպես դատավարական կողմ ծանոթանալ գործի նյութերին և դրանից հետո իրավաբանական օգություն ցուցաբերել Անահիտ Սիմոնյանին, երբ Դատարանը կհաստատեր իր կարգավիճակը: Այն, որ 08.09.2015թ. դատական նիստին ներկայանալն արդեն իսկ հաստատում են, որ ինքը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում Անահիտ Սիմոնյանին տրամադրել է իրավաբանական օգնություն նույնպես ընդունելի չէ, քանի որ տվյալ դատական նիստին ներկայացել է դատավարական կարգավիճակ ձեռք բերելու նպատակով:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 18:45-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Պատասխանողը որպես փաստաբան մասնակցել է 12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն Դիմողի կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ Դիմողից և նրա ամուսնուց՝ Շահեն Գևորգյանից բացատրություն վերցնելու գործողություններին:

Նշված դիմումով Դիմողը խնդրել է Անահիտ, Վահան Սիմոնյաններին և Էմինին դիտել որպես խումբ և բացահայտել նրանց կողմից կատարված խարդախությունը:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, 12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն Դիմողի կողմից ներկայացված դիմումի, բացատրություն ստանալու մասին 2012թ. նոյեմբերին կազմված արձանագրությունների Դիմողի կողմից 14.11.2012թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Դիմողի ամուսնու՝ Շահեն Գևորգյանի կողմից 05.10.2012թ. Պատասխանողին տրված լիազորագրի, Դիմողի ամուսնու՝ Շահեն Գևորգյանի և Պատասխանողի միջև 05.10.2012թ. կնքված փաստաբանական ծառայության վճարովի մատուցման պայմանագրի պատճեններով:

2) Պատասխանողը թիվ ԵԱՆԴ/1957/02/13 և ԵԱՆԴ/1277/02/12 քաղաքացիական գործերով ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի շահերը:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, Պատասխանողի կողմից ներկայացրած վճռի պատճեններով, «ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքի տեղեկատվությամբ:

3) Պատասխանողը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով (ըստ հայցի Տատյանա Բելյավցևայի ընդդեմ «Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ և մյուսների) ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի շահերը, որի դեմ առարկել է Դիմողը և Պատասխանողը հետագայում հրաժարվել է նշված գործով Անահիտ Սիմոնյանի շահերը ներկայացնելուց:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, 26.06.2015թ. Անահիտ Սիմոնյանի կողմից փաստաբան Վահան Ավագյանին տրված լիազորագրի պատճենով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 15.02.2016թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/145-16 տեղեկանքի համաձայն Վահան Ավագյանն արտոնագիրը ստացել է 16.10.2010թ.: Վահան Ավագյանի նկատմամբ 2010-2016թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 16.10.2015թ. թիվ 327-Ա/ԿԳ-15170 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահան Ավագյանին «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի «Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ... 4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:»: Այսինքն, եթե փաստաբանի կողմից ներկայացվում է վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, հանգեցնում է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտման, բացառությամբ, եթե նախկին վստահորդը տվել է իր գրավոր համաձայնությունը:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը.

արդյո՞ք Դիմողը հանդիսացել է փաստաբան Վահան Ավագյանի վստահորդը, եթե այո, ապա՝

արդյո՞ք փաստաբան Վահան Ավագյանի նոր վստահորդի շահերը հակասում են Դիմողի շահերին,

արդյո՞ք փաստաբան Վահան Ավագյանի նոր վստահորդի հանձնարարությունն ընդունելիս փաստաբանը տեղյակ է եղել հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքի առկայության մասին,

արդյո՞ք առկա է նախկին վստահորդի գրավոր համաձայնությունը:

Պատասխանելով առաջին հարցին՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ Դիմողը հանդիսացել է փաստաբան Վահան Ավագյանի վստահորդը հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 1.4 կետի վստահորդ է հանդիսանում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը: Այսինքն, ցանկացած անձ, ով դիմել է փաստաբանի օգնությանը հանդիսանում է վստահորդ: Սույն գործով ինչպես Դիմողի դիմումներով և բացատրությունով, այնպես էլ Պատասխանողի բացատրություններով հաստատվել է այն փաստը, որ Դիմողը դիմել է փաստաբան Վահան Ավագյանի օգնությանը: Փաստաբանի օգնությունը կարող է դրսևորվել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկացած գործունեությամբ, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկացած գործողությամբ, ինչպես նաև օրենքով չարգելված ցանկացած իրավաբանական այլ օգնությամբ: Վերոնշված հոդվածների համաձայն իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը կարող է իրականացնել նաև ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն), քրեական գործերով պաշտպանություն, որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցություն քրեական դատավարությանը և այլն: Սույն գործով հաստատվել է այն փաստը, որ Վահան Ավագյանը մասնակցել է 12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն Դիմողի կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ Դիմողից և նրա ամուսնուց՝ Շահեն Գևորգյանից բացատրություն վերցնելու գործողություններին: Հետևաբար Դիմողը հանդիսացել է փաստաբան Վահան Ավագյանի վստահորդը:

Պատասխանելով երկրորդ հարցին՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահան Ավագյանի նոր վստահորդի շահերը հակասում են Դիմողի շահերին հետևյալ պատճառաբանությամբ.

12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն ներկայացված դիմումով Դիմողը խնդրել է Անահիտ, Վահան Սիմոնյաններին և Էմինին դիտել որպես խումբ և բացահայտել նրանց կողմից կատարված խարդախությունը: Թիվ ԵԱՆԴ/0438/02/12 և թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործերով Դիմողը և Անահիտ Սիմոնյանը հանդիսանում են հակառակորդ կողմեր: Պատասխանողը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի շահերը, որի դեմ առարկել է Դիմողը և Պատասխանողը հետագայում հրաժարվել է նշված գործով Անահիտ Սիմոնյանի շահերը ներկայացնելուց: Թեև նշված քաղաքացիական գործերով որպես պատասխանող նշված է «Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ, սակայն և Դիմողը, և Պատասխանողը չէին դիտարկում «Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ-ին և Անահիտ Սիմոնյան ֆիզիկական անձին որպես

առանձին սուբյեկտներ, ավելին Պատասխանողը թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով ներկայացրել էր 26.06.2015թ. Անահիտ Սիմոնյանի կողմից փաստաբան Վահան Ավագյանին տրված լիազորագիրը: Հաշվի առնելով վերոնշված հանգամանքները, ինչպես նաև թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Դիմողի ներկայացված պահանջը (Անահիտ Սիմոնյանի («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) կողմից կնքված առոչինչ պայմանագրի անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ)), Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Վահան Ավագյանի նոր վստահորդ՝ Անահիտ Սիմոնյանի շահերը հակասում են փաստաբան Վահան Ավագյանի նախկին վստահորդ՝ Տատյանա Բելյավցևայի շահերին:

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի այն դիրքորոշմանը, որ *ինքը հնարավորություն կունենար իրավաբանական օգնություն ցուցաբերել Անահիտ Սիմոնյանին, երբ Դատարանը կհաստատեր իր կարգավիճակը,* արձանագրելով, որ վստահորդին իրավաբանական օգնություն ցուցաբերելը կարող է դրսևորվել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկացած գործունեությամբ, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկացած գործողությամբ, ինչպես նաև օրենքով չարգելված ցանկացած իրավաբանական այլ օգնությամբ: Վերոնշված հոդվածների համաձայն իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը կարող է իրականացնել նաև խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրել նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ և այլն:

Պատասխանելով երրորդ հարցին՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահան Ավագյանը նոր վստահորդի հանձնարարությունն ընդունելիս տեղյակ է եղել հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքի առկայության մասին հետևյալ պատճառաբանությամբ.

Պատասխանողը իր բացատրություններում նշել է, որ Դիմողին իրավաբանական օգնություն ցույց է տվել 14.11.2012թ., իսկ Անահիտ Սիմոնյանին 26.06.2015թ., այսինքն երկու տարի չորս ամիս հետո, և այդպիսի երկար ժամանակի ընթացքում հնարավոր չէր հիշել, որ նախկինում Դիմողին իրավական օգնություն է ցույց տվել: Մինչդեռ, 12.11.2012թ. ՀՀ ոստիկանություն ներկայացված դիմումով Դիմողը խնդրել է Անահիտ, Վահան Սիմոնյաններին և Էմինին դիտել որպես խումբ և բացահայտել նրանց կողմից կատարված խարդախությունը: Դիմումում Դիմողը մասնավորապես նշել է, որ իրենց Երևան քաղաքի, Ավան Դուրյան փ. 38շ, բն.34 հասցեում գտնվող բնակարանը իր ամուսնու համաձայնությամբ գրավադրվել է Անահիտ Սիմոնյանի («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) կողմից և վերջինս վարկ է ստացել: Սակայն վարկի գումարը Անահիտ Սիմոնյանի կողմից չի մարվել և բռնագանձում է տարածվել իրենց բնակարանի վրա: Բռնագանձումը տարածվել է թիվ ԵԱՆԴ/1277/02/12 քաղաքացիական գործով 03.04.2013թ. վճռի համաձայն: թիվ ԵԱՆԴ/1277/02/12 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանի («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) շահերը ներկայացրել է Պատասխանողը, այդ թվում սույն քաղաքացիական գործի շրջանակներում 07.10.2013թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք Անահիտ Սիմոնյանի անունից, որտեղ որպես երրորդ անձ նշել է Դիմողին: Բացի այդ սույն կարգապահական գործի շրջանակներում կողմերի կողմից տրված բացատրությունների և ներկայացված փաստաթղթերի համաձայն Պատասխանողը մի քանի այլ քաղաքացիական գործերով ներկայացրել է Անահիտ Սիմոնյանի շահերը:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը չէր կարող չհիշել, որ Դիմողին իրավաբանական օգնություն է ցույց տրվել իր կողմից: Խորհուրդը նշվածը բավարար է համար հաստատված համարելու այն հանգամանքը, որ թիվ ԵԱՆԴ/4207/02/14 քաղաքացիական գործով Անահիտ Սիմոնյանի («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) հանձնարարությունն ընդունելիս Պատասխանողը տեղյակ է եղել հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքի առկայության մասին, մասնավորապես՝ նախկինում իր կողմից Տատյանա Բելյավցևային իրավաբանական օգնություն ցույց տալու, ինչպես նաև վերջինիս շահերի և Անահիտ Սիմոնյանի («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) շահերի միջև առկա հակասության մասին:

Պատասխանելով չորրորդ հարցին՝ Պալատի խորհուրդը արձանագրում է, որ կողմերը չեն ներկայացրել Դիմողի կողմից տրված գրավոր համաձայնություն փաստաբան Վահան Ավագյանի կողմից Անահիտ Սիմոնյանին («Անահիտ Սիմոնյան» ՍՊԸ) իրավաբանական օգնություն ցույց տալու, վերջինիս շահերը ներկայացնելու վերաբերյալ:

Այսպիսով, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը թույլ է տվել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2–րդ մասի 4–րդ կետի պահանջների խախտում և ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Վահան Ավագյանին (արտոնագիր 998) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտման համար:***
2. ***Փաստաբան Վահան Ավագյանի (արտոնագիր 998) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահան Ավագյանին և Դիմող Տատյանա Բելյավցևային:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյան